ԱԿՆԱՐԿ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (1945-1965ԹԹ.)

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը լուրջ փոփոխություններ առաջացրեց հայ ժողովրդի կյանքում: Դիտելով մշակույթը որպես ժողովրդի վրա ներգործելու կարևոր միջոց, կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը ձգտում էին մշակույթի բնագավառում իրականացնել արմատական հեղափոխություն՝ այն դիտելով որպես սոցիալիստական հասարակության կառուցման բաղկացուցիչ մաս: Գալով իշխանության գլուխ խորհրդային իշխանությունը վերացրեց Հայաստանում տնօրինող հին մշակութային մարմինները: Բայց դրա փոխարեն ձևավորվեցին իշխանության նոր մարմիններ, որոնք ձեռնմուխ եղան մշակույթի բոլոր ոլորտների՝ գիտության, կրթության, արվեստի, գրականության զարգացմանը:

1920թ. դեկտեմբերին ստեղծվեց հանրապետության լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որը ստանձնեց մշակույթի բոլոր ճյուղերի անմիջական ղեկավարումը: Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը դարձավ զարգացած մշակույթի երկիր. դա պայմանավորված էր մի շարք դրդապատճառներով: Այսպես, օրինակ, 1921-1940 թթ. ընթացքում Հայաստանում գրագետ մարդկանց թիվը նկատելի աճեց, հասնելով մոտ 1 միլիոնի, ինչը կազմում էր բնակչության մոտ 83,9 տոկոսը: 1897 թ. այդ ցուցանիշը հավասար էր 9,2 տոկոսի:

Ինչպես ԽՍՀՄ-ի մյուս հանրապետություններում, Հայաստանում ևս շատ անմեղ մարդիկ մեղադրվեցին «ազգային թեքման» և նացիոնալիզմի մեջ.Ա.Խանջյան (ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1-ին քարտուղար), Սահակ Տեր-Գաբրիելյան (ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ), Ռուբեն Դաշտոյան (Կենտգործկոմի նախագահ), Եղիշե Չարենց, Սկսել Բակունց, Վահան Թոթովենց, Գուրգեն Մահարի, Մկրտիչ Արմեն, Ալազան (գրողներ) և ուրիշներ: Գրողների մեկուսացումով շրջանառությունից հանվում էր նաև նրանց գրական ժառանգությունը: Կուսակցական որոշումներով վաճառքից և գրադարաններից հանվեցին հարյուրավոր գեղարվեստական, ինչպես նաև այլ ձերբակալված հեղինակների գրքեր: Արգելք դրվեց նաև նախախորհրդային ժամանակաշրջանի այն գրողների վրա, որոնք համարվում էին «նացիոնալիստական» (Ռաֆֆի, Ռ.Պատկանյան, Ալիշան, Պեշիկթաշլյան, Ծերենց և ուրիշներ):[1]

---

[1] Տե՛ս, Դ. Գասպարյան, Հավատաքննություն. «Խորհրդային Հայաստան», 17 և 18 մարտի 1994թ.

Չնայած այն հանգամանքին, որ գաղափարական հարկադրանքի պայմաններում մշակույթը դիտվում էր գերազանցապես որպես կուսակցության քաղաքականությանը ծառայող բնագավառ, այնուամենայնիվ մշակույթի զարգացման ասպարեզում տեղի ունեցավ վիթխարի տեղաշարժ:

Հայաստանում գիտական և մշակութային կյանքը մեծ վերելք ապրեց ետպատերազմյան ժամանակահատվածում:[2]

Հայաստանի համար մեծ ձեռքբերում էր 1943թ. Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի կազմակերպումը, որը միավորեց երկրաբանության, քիմիայի, կենսաբանության, հասարակագիտության ինստիտուտները և մի շարք այլ գիտահետազոտական հիմնարկներ: Նրա հիմնադիր անդամների կազմում էին գիտության տարբեր բնագավառների խոշոր ներկայացուցիչներ՝ ֆիզիկոսներ Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը, ֆիզիոլոգ Լևոն Օրբելին, պատմաբան Հակոբ Մանանդյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը, գրականագետ Մանուկ Աբեղյանը, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և ուրիշներ: Գիտությունների ակադեմիայի առաջին նախագահ ընտրվեց արևելագետ Հովսեփ Օրբելին, որին 1947 թ. փոխարինեց աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը:

1947-1952թթ. գրականության ու արվեստի հարցերի շուրջը տեղի ունեցած վիճաբանությունների ժամանակ ճիշտ հարցադրումների հետ մեկտեղ կիրառվում էին նաև քննադատության այնպիսի մեթոդներ, որ խորթ են մաքսիզմ-լենինիզմի ոգուն: Գրականության ու արվեստի մի շարք ականավոր գործիչների ստեղծագործությունները գնահատելիս հանդես էր բերվում միտումնավոր վերաբերմունք, որը հիմք էր դառնում նրանց նկատմամբ լուրջ քաղաքական մեղադրանքի: Այդ տեսակետից բնորոշ էին այն վիճաբանությունները ու քննադատությունները, որ կազմակերպվեցին Երևանում ընդդեմ հայ գիտնականների աշխատություններում «միասնական հոսանքի» մնացուկների դրսևորման:

1953թ. Ստալինի մահից և անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, խրուշչովյան «ձնհալը» դրական անդրադարձ ունեցավ նաև մշակութային կյանքի վրա, սկսվեցին հրատարակվել նոր աշխատանքներ, վերականգնվեցին այլախոհության մեջ դատապարտված մշակութային գործիչներից շատերի բարի անունն ու համբավը:

Նշված ժամանակաշրջանում Հայաստանում մշակույթը աստիճանաբար սկսեց թոթափել ստալինյան շրջանի ծանր բեռը, ստեղծվեցին արժեքավոր արվեստի գործեր, որոնցում նկատելի էր առավել օբյեկտիվ, անաչառ

---

[2] Տե՛ս, Հայ ժողովրդական մշակույթը, ՀՀԳԱԱ, Եր., 2003, էջ 126:

վերլուծությունների միտումը: Սկսվեց արծարծվել Հայոց ցեղասպանության թեմատիկան: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի մշակութային կյանքի առաջընթացը խթան հանդիսացավ հանրապետության հասարակական կյանքի հետագա զարգացումների համար և սկզբնավորեց ազգային զարթոնքը՝ ձևավորելով ազգային վերածննդի գաղափարախոսությունը:

Մամուլը, ռադիոն և հեռուստատեսությունը իրենց հերթին մեծ դեր էին կատարում ժողովրդի գաղափարական և կուլտուրական դաստիարակության գործում: Վերելք էր ապրում սովետահայ գրականությունը, թատրոնը, կինոն, երաժշտությունը և կերպարվեստը:

Սակայն նշված ոլորտներում քաղաքական բնույթի նկատառումներով խեղաթյուրվում էին Հայաստանի պատմության շատ էջեր, ինտերնացիոնալիզմի քողի տակ տարվում էր համահարթեցման չհիմնավորված քաղաքականություն, արդյունքում հայ ժողովրդի պատմությունը և ազգային ժառանգությունը յուրացվում էր հարևան ժողովուրդների կողմից:

1950-ական թթ. երկրորդ կեսից, երբ դատապարտվեց անհատի պաշտամունքը, նոր շրջան սկսվեց հայ գրականության զարգացման ասպարեզում: Վերականգնվեցին Ե.Չարենցի և Ա.Բակունցի բարի անուններն ու վաստակը: Ուժեղացավ հետաքրքրությունը հայ հին և միջնադարյան գրականության նկատմամբ: Ընթերցողների սեփականությունը դարձավ արևմտահայ բանաստեղծներ Սիամանթոյի, Վարուժանի, Դուրյանի, Մեծարենցի ժառանգությունը, հրատարակվեցին խորհրդային իշխանության նկատմամբ չեզոք վերաբերմունք դրսևորած սփյուռքահայ գրողների երկերը:

Այսպիսով, անհատի պաշտամունքի քննադատությունը մասամբ մեղմացրեց, բայց չկասեցրեց կուսակցական-պետական գաղափարախոսության դոգմատիզմը: Մասնավորապես անհամեմատ քիչ էին հետաքրքրություն առաջացնող ուշագրավ և մատչելի արվեստի գործերը: Խորհրդային հասարակության, Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական սուր հիմնախնդիրները շատ գործերում շրջանցվում էին: Դրանք գրվում էին ոչ արտահայտիչ լեզվով, բացառապես դրական փաստերի ներկայացմամբ, գունագեղ և իրականությունից հեռու նկարագրություններով գովերգելով կուսակցության գաղափարախոսությունը և գործունեությունը: Ուսումնասիրվող ժամանակաշրջանին բնորոշ մշակույթի ոլորտում գոյություն ունեցող բացթողումներից և թերություններից էր նաև ճշմարտության լիարժեք բացակայությունը, թերարժեք տեղեկատվությունը, ինչպես նաև սոցիալական կյանքի հասունացած հիմնախնդիրներից և հակասությունների վերլուծությունից խուսափելը:

Չնայած նշված թերություններին 1950-60--ական թթ նոր հաջողություններ ծեռք բերվեցին երաժշտության, թատերական և կերպարվեստի բնագավառներում: Երաժշտության և կինոարվեստի մի շարք գործեր և

գործիչներ համաշխարհային ճանաչում ստացան: Մասնավորապես Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում հաջողությամբ անցան Հ.Ստեփանյանի «Լուսաբացին», Գ.Արմենյանի «Խաչատուր Աբովյան» ներկայացումները և Ա.Խաչատրյանի «Սպարտակ» հրաշալի բալետը:[3] Սունդուկյանի անվան թատրոնում հաջողությամբ բեմադրվեց «Դեպի ապագան» հեղափոխական պաթոսով հագեցված դրամատիկ կոմպոզիցիան ըստ Եղիշե Չարենցի ստեղծագործությունների: Միանգամայն ուրախալի էր, որ Մոսկվայի թատրոնները հաջողությամբ բեմադրեցին հայ դրամատուրգներ Գ.Տեր-Գրիգորյանի և Ա.Արաքսմանյանի պիեսները:[4] Սիմֆոնիկ ու կամերային երաժշտության բնագավառում ունեցած հաջողությունների հետ մեկտեղ համեմատաբար թույլ էր զարգանում մասսայական երգային ստեղծագործությունը: Բովանդակալից էր Հայաստանի կերպարվեստագետների աշխատանքը: Երևանում և այլ քաղաքներում կազմակերպվեցին մի շարք գեղարվեստական ցուցահանդեսներ: 1950-ական թթ. ծաղկում ապրեց հայտնի նկարիչներ Հովհաննես Զարդարյանի, Էդվարդ Իսաբեկյանի, Գրիգոր Խանջյանի և ուրիշների ստեղծագործությունը: Նկարելով տարբեր ժանրերով՝ նրանք իրենց կտավներում արտացոլեցին Հայաստանի բնությունը, նրա պատմական անցյալը:[5] Որակական տեղաշարժեր տեղի ունեցան նաև ճարտարապետության մեջ: Հետպատերազմյան տասնամյակների ընթացքում ճարտարապետության զարգացումը նշանավորվեց հայկական ճարտարապետական ավանդույթների ստեղծագործական յուրացմամբ, այդ ավանդույթները նոր խնդիրների հետ զուգակցելու ձգտումով:

Խորհրդային Միության Կոմկուսի Կենտկոմը 1946-1948թթ. հայտնի որոշումներ ընդունեց գրականության ու արվեստի ասպարեզում գաղափարական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու ուղղությամբ. «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին (1946թ. օգոստոսի 14), «Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին» (1946թ. օգոստոսի 26), «Մեծ կյանք» կինոնկարի մասին (1946թ. սեպտեմբերի 4):

Հետպատերազմյան շրջանում գաղափարական կյանքում կարևոր միջոցառումների կողքին թույլ տրվեցին նաև կոպիտ սխալներ, որոնք խիստ

---

[3] Տե՛ս, Թատրոնի, կինոյի և հեռուստատեսության հայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես, Եր., 1974, էջ 23:
[4] Տե՛ս, Յա. Ն. Զարոբյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի 22-րդ համագումարին, Հայպետհրատ, Եր., 1961թ., էջ 114:
[5] Տե՛ս, Հ.Հակոբյան, Հայ արվեստի աշխարհում, Եր., 1998, էջ 31:

բացասաբար էին ազդում ինչպես կադրերի դաստիարակության, այնպես էլ արվեստի զարգացման վրա:[6]

Այս երևույթներն առավել ընդգծված տեսք ստացան բրեժնևյան վարչակարգի ժամանակաշրջանում, երբ մշակութային կյանքը ԽՍՀՄ-ում, ինչպես նաև մեր հանրապետությունում տառապում էր լճացման դոգմատիզմով: Սակայն չնայած նշված թերություններին, ծեռք բերվեցին անուրանալի արժեքներ:

Այսպիսով, մշակույթի ոլորտը խարսխելով սոցիալիզմի առավելությունների բացարձականացման անիրատես և հավկնոտ գաղափարի վրա, փորձելով տեսականորեն լուծել մի շարք հիմնախնդիրներ, գործնականում դրանց անդրադառնում էր ոչ խորը վերլուծությունների հիման վրա:

Չնայած գոյություն ունեցող խոչընդոտներին խորհրդահայ մշակույթը որոշակի զարգացում ապրեց: Առավելապես խրախուսվում էին սոցիալիզմի դարաշրջանի իրադարձություններին նվիրված գործերը: Այդ գործերում չհաջողվեց վերացնել արատավոր այն մոտեցումը, երբ գունազարդվում էին պատմության էջերը, հասարակության առաջընթացն արգելակող դժվարություններն ու բացթողումները շրջանցվում, կոծկվում էին հակասություններն ու սխալները:

Չնայած այն հանգամանքին, որ մշակույթի մի շարք գործիչներ հասարակության հասունացած խնդիրներին ժամանակին և իրատեսորեն չէին արձագանքում, կյանքի առաջադրած հարցադրումների պաստասխաններից խուսափում էին, բայց այնուամենայնիվ ստեղծվում էին արվեստի մնայուն արժեքներ, որը պայմանավորված էր հիմնականում պետության կողմից այդ նպատակին հատկացվող միջոցների հետզհետե ավելացման շնորհիվ:

Ստիպողաբար մշակույթը սկսեց թոթափել անցյալի ծանր բեռը, ստեղծվում էին հայ ժողովրդի ինչպես պատմական անցյալին, այնպես էլ ներկային նվիրված բազմաբնույթ գրական գործեր: Չնայած դրան, անբավարար էր հայ ժողովրդի հերոսական պայքարի շատ դրվագների Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում 19-րդ դարի 2-րդ կեսին, ինչպես նաև ցեղասպանության շրջանում ինքնապաշտպանական կռիվների և զինված ելույթների լուսաբանումը: Միայն 1960-ական թթ.-ի սկզբներից, երկարատև հարկադրական լռությունից հետո, սկսեցին անդրադառնալ հայոց ցեղասպանության թեմային:

1940-ական թթ. ՀԿԿ Կենտկոմը մի շարք որոշումներ ընդունեց Հայաստանի մշակութային կյանքը զարգացնելու մասին: 1945թ. որոշում ընդունվեց ՀԽՍՀ Լուսժողկոմի ենթակայությունից մշակութային-լուսավորական հաստատությունները առանձնացնելու մասին: Կապված մշակութային հաստատությունների աճի հետ՝ անհրաժեշտ էր ստեղծել ՀԽՍՀ Ժողկոմխորհին կից

---

[6] Ա.Պ.Սիմոնյան, Երևան (1920-1967թթ.), «Միտք» հրատարակչություն, Եր., 1968թ., էջ 25:

կուլտուր-լուսավորական վարչություն և այդ հաստատությունները տեղափոխել Լուսժողկոմի ենթակայությունից այդ վարչության ենթակայության տակ:[7]

Ելնելով վերը նշվածից պետք է եզրակացնել, որ ՀԽՍՀ պետական և կուսակցական մարմինները, միութենական համապատասխան որոշումներից ելնելով, հաճախակի անդրադարձել են մշակույթի ոլորտի խնդիրներին իրենց բազմաթիվ որոշումներով: Չնայած այդ որոշումների իրագործման ընթացքում գոյություն ունեցող մի շարք թերությունների, որանք մշակույթի զարգացման ասպարեզում մեծ նշանակություն ունեցան:

1946-1950թթ. գյուղական ակումբների թիվը հասավ մինչև 1022, գյուղական գրադարանների և ընթերցարանների թիվը մինչև 1232 և 1950թ. կինոսարքավորումների թիվը կազմում է 374: Եթե 1913թ. հաշվվում էր 13 գրադարան, մոտ 120 հազար կտոր գրքային ֆոնդով, ապա 1959թ. արդեն կային 2800 մասսայական, գիտատեխնիկական, դպրոցական, կուլտնտեսային և այլ տիպի գրադարաններ՝ շուրջ 16,5 մլն գրքային ֆոնդով:[8]

ԽՄԿԿ Կենտկոմի 1964թ. օգոստոսի 12-ի «Աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործում թանգարանների դերի մասին» որոշումից հետո զգալի չափով բարելավվեց հանրապետության թանգարանների գործունեությունը: Հանրապետության թանգարանները ակտիվորեն ընդգրկվեցին թանգարանների համամիութենական ստուգատեսի աշխատանքներում և պատվով կատարեցին իրենց վրա վերցրած պարտավորությունները:[9]

ՀԿԿ Կենտկոմի բյուրոն որոշում ընդունեց 23.05.50թ. հանրապետության կուլտնտեսություններում գեղարվեստական ինքնագործունեության զարգացման մասին:[10] Եվ արդեն 1961թ. հանրապետությունում կային շրջանային և գյուղական մշակույթի 88 տներ, 45 արհմիութենական մշակույթի պալատներ և քաղաքային ակումբներ, 974 գյուղական, կուլտնտեսային և այլ գերատեսչական ակումբներ: Երևան, Լենինական, Կիրովական քաղաքներում և մի շարք ավաններում ու շրջկենտրոններում գործում էին 19 մշակույթի, հանգստի զբոսայգիներ և 23 զանազան տիպի թանգարաններ, գործում էին տարբեր տիպի 2653 գրադարաններ, որոնց գրքային ֆոնդը հասնում էր 17 մլն օրինակի, ստացիոնար և շրջիկ կինոսարքերի և կինոթատրոնների թիվը հասնում էր 662 ի, ռադիոընդունիչներինը և ռադիոկետերինը՝ 287 500-ի, հեռուստացույցներինը 38 հազարի:[11]

---

[7] Տե՛ս, Գ.Խաչատրյան, Հայաստանի կուլտուրան զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում, Եր., 1982, էջ 91:
[8] Մշակույթի նախարարության արխիվ, ֆ.14, գ.258, թ.6,էջ 47:
[9] ՀԱԱ ֆմ 119, ց 5, գ.399, էջ 68:
[10] ՀՔԿՎ ֆ.1, ց.30, գ.30, էջ 24.
[11] Տե՛ս, Բ.Ս.Օհանջանյան, Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965թթ.), Եր., 1970թ., էջ 263:

Գյուղի մշակույթային կյանքը բարելավելու ուղղությամբ վիթխարի աշխատանք են կատարում հանրապետական և շրջանային մասուլը, ռադիոն: Տեղական կոմերիտական կազմակերպությունների նախաձեռնությամբ ստեղծվեցին կուլտուրայի համալսարաններ, գյուղատնտեսական առաջավորների դպրոցներ, նոր թափ ստացավ գյուղի բարեկարգումը և կանաչապատումը, շաբաթօրյակների միջոցով կուլտուրական շինարարության ծավալումը, հասարակական կարգով ակումբների վերանորոգումը, ինքնագործ խմբերի կազմակերպումը ու ղեկավարումը:

Ինչպես քաղաքի, այնպես էլ գյուղի կյանքում, վիթխարի դեր էր կատարում ռադիոն և հեռուստատեսությունը: Նրանց միջոցով, ոչ միայն սերտ կապ է հաստատվում քաղաքի և գյուղի միջև, այլև գյուղը կապում է ամբողջ երկրի հետ: Ռադիոն և հեռուստատեսությունը հանդիսանում են գյուղի բնակչության բազմակողմանի դաստիարակության մեծ դպրոց: Հանրապետության Մշակույթի նախարարությունը միջոցառումներ մշակեց գյուղական ակումբների լրիվ ռադիոֆիկացման համար: 1958-1965թթ. զգալի աշխատանք կատարվեց գյուղական բնակչության կինոսպասարկման բարելավման ուղղությամբ: Զգալիորեն բարելավվեց կինոցուցադրման որակը:[12]

Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ ժամանակ ռադիոն և հեռուստատեսությունը պրոպագանդում էին միակուսակցական կաղապարված գաղափարներ, որի նկատմամբ մարդիկ հետզհետե դառնում էին անտարբեր: Բայց, այնուամենայնիվ, հիշյալ ոլորտներում չնայած զգալի թերություններին, եղան նաև տեղաշարժեր:

Այսպիսով, ետպատերազմյան շրջանում հայ ժողովրդի հոգևոր կյանքը կարևորվեց գիտության, ժողովրդական լուսավորության, գրականության, արվեստի տարբեր ճյուղերի նշանակալի հաջողություններով:

Վերլուծելով նշված ժամանակահատվածում մշակույթի զարգացման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները Խորհրդային Հայաստանում կարելի է եզրակացնել, որ կուսակցական և պետական մարմինները, մշտապես իրենց ուշադրության կենտրոնում պահելով մշակույթի ոլորտը, հասել են անվիճելի հաջողությունների իրենց խնդիրների լուծման ճանապարհին:

Այդ ժամանակաշրջանի համար կարևորվում է նաև այն միտումը, որ սկսած 1960-ական թթ. սկզբից մշակույթի առջև խնդիր դրվեց հաղթահարել նախորդ շրջանի դոգմատիզմը, ստեղծել ոչ միայն պատմական հեռավոր անցյալի, այլև ժամանակակից իրադարձությունների վերաբերյալ գործեր

---

[12] Տե՛ս, Բ.Ս.Օհանջանյան, Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պատմությունից (1953-1965թթ.), Եր., 1970թ., էջ 245:

ստեղծելով հասարակությանը հուզող և բարոյական դաստիարակությանը նպաստող մշակութային արժեքներ:

Արդեն ՍՍԿԿ 20-րդ համագումարից հետո պայքար է սկսվում ընդդեմ սոցռեալիզմի հակագեղարվեստական ծայրահեղությունների, և հրամայական է դառնում առօրյա իրականության, ժամանակակից կյանքի պարզ իրապաշտական պատկերման սկզբունքը: Պաշտոնական արվեստի շրջանակներում տեղի ունեցող փոփոխությունները սոցիալիզմի վերականգնման փորձեր էին, որոնց քողի տակ ստեղծվեցին մի կողմից իրենց ժամանակի անպաճույճ վավերագրեր հանդիսացող, մյուս կողմից՝ հայ ժողովրդի պատմական անցյալը ներկայացնող բազմաթիվ արժեքավոր գործեր:

Դասական ակունքներից սերող իրապաշտական նկարչության և պատմողական թեմատիզմի նոր մեկնաբանումը, արդիականացումը առանձնահատուկ դեր խաղացին արվեստում՝ սիրելի ու մտերմիկ դարձնելով հատկապես 1960-ականներին արված նկարները, որոնցում պատկերված տիպական կերպարները, մտավորականների դիմանկարները ու փողոցային տեսարանները ժամանակի բույրն են զգացնել տալիս (Ս.Մուրադյան- «Խաչմերուկ», «Իմ քաղաքում», «Դեղին զգեստով աղջիկը», «Պարույր Սևակ» և այլն):

Թեմատիկ ու բովանդակային առումով նկարչությունը արմատապես կապված է հայկական իրականության հետ՝ միավորելով պատմական անցյալն ու ապագային նայող ներկան:

Նկարչության մեջ գեղարվեստական լեզուն հարատև փոխակերպումներ է ապրել, քանզի իրականության և ընդհանրական կատարելության համաձայնեցման խնդիրը մեծապես կանխորոշեց համարժեք գեղարվեստական լեզվի փնտրտուքը: Սակայն, երևի թե նոր իրապաշտական մտածողությունն է արվեստի համար խորհրդանշականը:

Խորհրդային կայսրության կազմում գտնվող Հայաստանի համար լիբերալ կոմունիզմի կարճատև շրջանը վեր հանեց մինչ այդ թաքուն բաբախող ազգային ոգին, որի իբրև արգասիք ունեցավ խորհրդանշական 1965 թվականը: Այդ շրջանի բազմաթիվ հայ մտավորականների ջանքերով սկսվեց 1960-ականներին ազգային զարթոնքի առաջին փուլը, որոնցից շատերը նաև այդ շարժման ակտիվ շարունակողներից էին 1980-ականների վերջի-90-ականների սկզբի թոհուբոհում: Ուսումնասիրվող ժամանակահատվածի մշակույթի գործիչների ստեղծագործությամբ և հասարակական գործունեությամբ ամբողջանում է քաղաքացիական ու հայրենասիրական պաթոսը կրող մտավորականների կերպարը: